ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2021/213

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ

Մասնակից՝ «Արտակշին» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ներկայացուցիչներ՝ Ս. Հովհաննիսյանի, Պ. Գաբրելյանի

«Արտակշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Տ. Գրիգորյանի, Ս. Սիրեկանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՉՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2021/1» գնանշման հարցման ընթացակարգ, սննդամթերքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՉՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2021/1»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.08.2021թ.-ի թիվ 26/26-1/13782-2021 գրությամբ «Արտակշին»

ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.08.2021թ. թիվ 1417 գրության հիման վրա, 30.08.2021թ.-ին «Արտակշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 30.08.2021թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.08.2021թ.-ի թիվ 450-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, ընթացակարգի քննությունը 06.09.2021թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

08.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/213 համարի ծածկագիրը:

16.09.2021թ.-ին և 24.09.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.09.2021թ.-ին:

2. <u>Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը 23.08.2021թ. թիվ 1417 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը, Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Լուսաբաց» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը թղթային ձևով սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարել են համապատասխանաբար «ՉՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2021/1», «ՉՀ-ԼՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2021/1» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգեր: Գնման ընթացակարգերին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՐՏԱԿՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն), որի հետ 2021 թվականի մարտի 18-ին կնքվել են համապատասխան պայմանագրեր (այսուհետև՝ Պայմանագիր):

Կնքված պայմանագրերի շրջանակներում մինչև 25.12.2021թ.-ը պետք է մատակարարվեր համապատասխանաբար 358.55 (երեք հարյուր հիսունութ ամբողջ հիսունհինգ հարյուրերրորդական) կգ և 70.85 (յոթանասուն ամբողջ ութսունհինգ հարյուրերրոդական) կգ «Կարագ, զելանդական», որը չի մատակարարվել (սկսած սույն թվականի հունիսի 01-ից):

Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները հիմք ընդունելով պարբերաբար չիրականացվող մատակարարումները և կնքված Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ 2021 թվականի օգոստոսի 18-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքների մասով միակողմանի լուծել են Պայմանագիրը, որը հրապարակված է գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.procurement.am ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՉՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2021/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արտակշին» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 15.09.2021թ.-ին թիվ 1573-21 գրությամբ հավելել է նաև հետևյալը.

««ԱՐՏԱԿՇԻՆ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/213 և ՍՑ-ԼՕ-2021/214 ընթացակարգերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալ դիրքորոշումը.

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» և «Լուսաբաց» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները դիմել են Չարենցավանի համայնքապետարան (որպես լիազորված մարմին)՝ սույն թվականի մարտի 18-ին կնքված համապատասխան

գնման պայմանագրերով սահմանված զելանդական կարագի մատակարարումների հետ առաջացած խնդիրները կարգավորելու նպատակով՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթերը, այդ թվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պարզաբանումը:

Նշված խնդիրները ծագել են զելանդական կարագի շուկայական գնի թանկացումով պայմանավորված՝ սկսած սույն թվականի մայիսի 01-ից: Խնդրի կարգավորման նպատակով համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների, համայնքապետարանի աշխատակիցների կողմից իրականացվել են բանավոր քննարկումներ Մատակարարի հետ, որը սակայն արդյունք չի տվել:

Վերը նշված հարցերի կարգավորման նպատակով Չարենցավանի համայնքապետարանը 2021 թվականի հուլիսի 21-ի թիվ 1190-21 գրությամբ «ԱՐՏԱԿՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հայտնել է, որ ուսումնասիրելով գնման գործընթացներին վերաբերվող փաստաթղթերը գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովները, ղեկավարվելով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, ներկայացված հայտերի գնահատումը, ամփոփումը, հաղթողների ընտրությունն իրականացրել են հրավերով սահմանված կարգով և Ծիծեռնակ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից նախորդիվ Ձեզ ուղղված գրությամբ նաև տեղեկացվել է այն իրավական դրույթի մասին, ինչը զետեղված է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պարզաբանման տեքստում: Միաժամանակ տեղեկացրել ենք, որ Ընկերության կողմից շարունակաբար տվյալ ապրանքի չմատակարարումը ուղղակիորեն խաթարում է համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների բնականոն աշխատանքը և դա այն պարագայում, երբ պայմանագրի կնքումից հետո որոշ ժամանակահատված Ընկերության կողմից տվյալ ապրանքի զելանդական կարագի, մատակարարումների հետ կապված խնդիրներ չեն առաջացել, ինչն այժմ անհասկանալի է: Տեղեկացրել ենք նաև, որ պայմանագրերով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետների խախտման դեպքում (հինգ օրացուցային օրվա ընթացքում, որն ամրագրված է կնքված պայմանագրերում)՝ ապրանքների համապատասխան, պահանջագրերով ներկայացված խմբաքանակը չմատակարարելու դեպքում միակողմանի (մասնակի) կլուծվի վերը նշված պայմանագրերը և Կազմակերպության տվյալները կտրամադրվեն լիազորված մարմնին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հայտնում ենք նաև, որ Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Հրաշք», «Հեքիաթ», «Հանգակ», Ալափարս, Արզական, Բջնի գյուղերի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կազմակերպված և իրականացված գնման գործընթացների արդյունքում կնքված պայմանագրերի շրջանակներում մինչ օրս մատակարարվում է զելանդական կարագ՝ առանց հաշի առնելու տնտեսական վայրիվերումները:

Ինչ վերաբերվում է «ԱՐՏԱԿՇԻՆ» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված դիրքորոշմանը, հայտնում ենք հետևյալը.

1. Մինչև սույն թվականի հունիսի 01-ը «ԱՐՏԱԿՇԻՆ» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը մատակարարել է 66.45 կգ «Կարագ, զելանդական» (չմատակարարված մասը կազմում է 358.55 (երեք հարյուր հիսունութ ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) կգ), իսկ Չարենցավան քաղաքի «Լուսաբաց» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ 19.15 կգ «Կարագ, զելանդական» (չմատակարարված մասը կազմում է 70.85 (յոթանասուն ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) կգ): Վերը նշվածն ամրագրված է երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրություններով, որն անհրաժեշտության պարագայում կարող է ներկայացվել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

2. Պատվիրատուները, վերը նշված ծածկագրերով գնման գործընթացների կազմակերպման և իրականացման ժամանակահատվածում, իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում գործել են բացառապես Օրենքով և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և «ԱՐՏԱԿՇԻՆ» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը չի կարող վկայակոչել կամ ներկայացնել որևէ փաստական տվյալ «դիտավորության» և «ընկերության իրավունքների ոտնահարման» համատեքստում:

3. «ԱՐՏԱԿՇԻՆ» սահմանափակ պատասխանատվության ընկերության այն պնդումները, թե իբրև պայմանագրերի կնքման օրվանից մատակարարվել է ոչ զելանդական կարագ և ընդունվել ու վճարվել է Պատվիրատուների կողմից, իրականությանը չի համապատասխանում, քանի որ առկա են ապրանքը չընդունելու վերաբերյալ կազմված արձանագրություններ, որոնք ստորագրված են նյութական պատասխանատու անձանց կողմից:

4. «ԱՐՏԱԿՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2021 թվականի մայիսի 07-ին էլեկտրոնային փոստի միջոցով առաքված գրությանն ի պատասխան (ի դեպ գրությամբ նկարագրված հիմնավորումները բովանդակային առումով գրեթե չեն տարբերվում գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած հիմնավորումներից) Ծիծեռնակ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը գրավոր տեղեկացրել է այն բոլոր իրավանորմերի վերլուծությունը, ինչով առաջնորդվել է Պատվիրատուն:

5. 2021 թվականի օգոստոսի 18-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքների մասով միակողմանի (մասնակի) պայմանագրերի լուծումն իրականացվել է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

6. Տնտեսվարող սուբյեկտների նման տնտեսական վարքագծի դրսևորումները ուղղակի խոչընդոտում են պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում ձևավորվող մրցակցային միջավայրի ստեղծմանն ուղղված աշխատանքներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը, խնդրում ենք Պատվիրատուների գործողությունները համարել իրավաչափ և Ընկերության տվյալները ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

3. <u>«Արտակշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 08.09.2021թ.-ին գրությամբ դիմել է «Արտակշին» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.08.2021թ.-ի թիվ 26/26-1/13782-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 10.09.2021թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Ձեզ ուղարկված Չարենցավան համայնքի ղեկավարի 23.08.2021թ. թիվ 417-21 գրության մեջ մեջբերում եմ՝ «Կնքված պայմանագրերի շրջանակներում մինչև 25.12.2021թ.-ը պետք է մատակարարվեր համապատասխանաբար 358.55 (երեք հարյուր հիսունութ ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) կգ և 70.85 (յոթանասուն ամբողջ ութսունհինգ

հարյուրերրոդական) կգ «Կարագ, զելանդական», որը չի մատակարարվել (սկսած սույն թվականի հունիսի 01-ից):»: Նշեմ որ կնքված պայմանագրերի շրջանակներում Ընկերությունը պետք է մատակարարեի համապատասխանաբար 425 կգ և 90 կգ կարագ, ինչը մատակարարվել և ընդունվել է պատվիրատուի կողմից սկսած սույն թվականի մարտ ամսվանից: Ձեր ուշադրությանն եմ ուզում արժանացել այն փաստը, որ այս ամենը ոչ այլ ինչ է քան դիտավորություն և ընկերության իրավունքների ոտնահարում այնքանով որ ինչպես է ստացվում պատվիրատուն սկզբնական շրջանակներում ընդունում և վճարում է մատակարարված կարագի ի դեպ ոչ Զելանդական, այնուհետև նույն պատվիրատուն պահանջում է թե իբրև ընկերությունը ստանձնելով պայմանագրային պատրավորություն դրա շրջանակներում պարտավոր է մատակարարել միայն զելանդական կարագ:

Նույն գրության մեջ նշվում է նաև, որ պարբերաբար չիրականացված մատակարարումները և պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջների խախտումը այն է ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել է 5 օրից ավելի, հիմք է հանդիսացել պայմանագրի միակողմանի լուծման համար: Հարկ եմ համարում նշել որ նշված դրույթը չի խախտվել ապրանքները ժամանակին մատակարարվել են ինչը երևում է իրենց կողմից ներկայացված պահանջագրի և ընկերության կողմից ապրանքի մատակարարման և դուրս գրված հաշիվ-ապրանքագրերի ժամկետներից: Ընկերությունը պահանջագիրը ստանալուց հետո պարտաճանաչ մատակարարել է ապրանքը, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու պատճառով ետ է վերադարձվել:

Համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի զ պարբերության «32. հրավերով նախատեսվում է նաև, որ՝

զ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ ապրանքի ամբողջական նկարագիր),»

Հրավերով նախատեսված չի եղել ներկայացնելու ապրանքի ամբողջական նկարագիր հատվածը, մնացել է միայն ձեռք բերվող ապրանքի չափաբաժնի համարը, անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Նույն կետի 2-րդ ենթակետի՝

2) «…Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,....»

Պատվիրատուն հրավորով չափաբաժնի անվանումը գրել էր «Կարագ, Զելանդական», այսինքն ստացվում է, որ եթե մասնակիցը հայտով ներկայացներ «կարագ» իր հայտը մերժման ենթակա կլիներ, բացի դա օրենքի տառացի մեկնաբանությունից ստացվում է որ չափաբաժնի անվանումը չի համարվում ապրանքի ամբողջական նկարագիր:

Սույն որոշման 50-րդ կետի համաձայն՝

«50. Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:»

«ՀՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2021/1», «ՀՀ-ԼՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2021/1» ծածկագրերով կնքված պայմանագրի ներքոնշյալ կետերի համաձայն՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը ն վճարել դրա համար:

Համաձայն պայմանագրի 1.1-ի կետի վաճառողը «1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգդվ, ծավալներով, ժամկետներում ն հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը»:

Պայմանագրի հավելված 1-ի տեխնիկական բնութագրի 68-րդ չափաբաժնի համար սահմանված է հետևյալը «Կովի կաթից սերուցքային կարագ, յուղայնությունը առնվազն 82%, բարձր որակի, թարմ վիճակում,», իսկ անվանումը բաժնում նշված է Կարագ Զելանդական:

Վերը նշված հիմքերի վերլուծությունից պարզ է դառնում, որ Վաճառողը պարտավորվում է մատակարարել ոչ թե ապրանքի անվանման այլ տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք: Այսինքն Գնորդը չի կարող Վաճառողին պարտադրել մատակարարել կոնկրետ Զելանդական կարագ:

Բերված հիմքերից ելնելով պարզ է դառնում որ պատվիրատուի կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու և պայմանագիրը միակողմանի լուծարելու հետ կապված գործողությունները արհեստական են և չհիմնավորված:»:

Վերոգրյալից ելնելով՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Արտակ Շին» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2021/213 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի և «Արտակշին» ՍՊԸ-ի միջև 18.03.2021թ.-ին կնքվել է թիվ «ՉՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2021/1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ թիվ 68-րդ չափաբաժնով ապրանքի անվանում նշվել է «Կարագ, զելանդական», իսկ տեխնիկական բնութագրում սահմանվել է հետևյալը. «Կովի կաթից սերուցքային կարագ, յուղայնությունը՝ առնվազն 82%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ, չափածրարված 5-25 կգ: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %: Մատակարարումը միայն ջերմակարգավորվող տրանսպորտային միջոցով:»:

iv. Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից (ընդունող հանձնաժողով) 28.06.2021թ.-ին կազմված «ակտ արձանագրության» վերտառությամբ փաստաթղթի (այսուհետ նաև՝ Ակտ) համաձայն՝ «Արտակշին» ՍՊԸ-ի կողմից 28.06.2021թ.-ին Պատվիրատուին է մատակարարվել

Պայմանագրի կետերին չհամապատասխանող ապրանք. Մասնավորապես՝ մատակարարվել է հայկական սերուցքային կարագ՝ կարագ զելանդականի փոխարեն:

v. Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից (ընդունող հանձնաժողով) 06.07.2021թ.-ին կազմված «ակտ արձանագրության» վերտառությամբ փաստաթղթի (այսուհետ նաև՝ Ակտ) համաձայն՝ «Արտակշին» ՍՊԸ-ի կողմից 06.07.2021թ.-ին Պատվիրատուին է մատակարարվել Պայմանագրի կետերին չհամապատասխանող ապրանք. Մասնավորապես՝ մատակարարվել է հայկական սերուցքային կարագ՝ կարագ զելանդականի փոխարեն:

vi. Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից (ընդունող հանձնաժողով) 02.08.2021թ.-ին կազմված «ակտ արձանագրության» վերտառությամբ փաստաթղթի (այսուհետ նաև՝ Ակտ) համաձայն՝ «Արտակշին» ՍՊԸ-ի կողմից 02.08.2021թ.-ին Պատվիրատուին է մատակարարվել Պայմանագրի կետերին չհամապատասխանող ապրանք. Մասնավորապես՝ մատակարարվել է հայկական սերուցքային կարագ՝ կարագ զելանդականի փոխարեն:

vii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 18.08.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 49 համարի ծանուցման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Արտակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 18.03.2021թ.-ին կնքված «ՉՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2021/1-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Մասնակցի կողմից մինչև 25.12.2021թ.-ը պետք է մատակարարվեր 358.55 (երեք հարյուր հիսունութ ամբողջ հիսունհինգ հարյուրերրորդական) կգ «Կարագ, զելանդական», որը չի մատակարարվել (սկսած սույն թվականի հունիսի 01-ից): Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը 2021 թվականի օգոստոսի 18-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքի մասով միակողմանի լուծել է Պայմանագիրը:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.08.2021թ.-ի թիվ 26/26-1/13782-2021 գրությամբ «Արտակշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը

պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: Ընդ որում, եզրակացությունը տրամադրվում է ոչ շուտ, քան պայմանագրով արձանագրության հաստատման համար սահմանված վերջնաժամկետին նախորդող աշխատանքային օրը: Սույն կարգի 50-րդ կետով նախատեսված ֆիզիկական անձը մինչև սույն կետով նախատեսված եզրակացությունը հաստատվելու օրը պատասխանատու ստորաբաժանմանը գրավոր ներկայացնում է դիրքորոշում՝ մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության՝ պայմանագրի պահանջներին համապատասխանության մասին: Եզրակացության տրամադրման համար սահմանված վերջնաժամկետից հետո ներկայացված դիրքորոշումը չի քննարկվում պատասխանատու ստորաբաժանման կողմից: Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը գործընթացին մասնակցելու մասին ֆիզիկական անձին տեղեկացնում է հանձնման-ընդունման նպատակով պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնվելուն հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված դիրքորոշումը՝

1) դրական է, ապա դրա մասին եզրակացության մեջ կատարվում է համապատասխան նշում.

2) բացասական է, սակայն պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցիչը չի ընդունում առարկությունը, ապա վերջինիս կողմից տրվում է դրական եզրակացություն, իսկ առարկությունները քննարկվում են պատասխանատու ստորաբաժանման և պայմանագիրը կնքած անձի կողմից, անհրաժեշտության դեպքում, դրան մասնակից դարձնելով նաև առաջարկությունները ներկայացրած ֆիզիկական անձին: Քննարկման արդյունքներն արձանագրվում են, կազմվում է ամփոփաթերթ, որն ստորագրվում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից: Քննարկումների անցկացման և արդյունքների ամփոփման ժամկետը չի կարող ավելի լինել արձանագրությունը հաստատվելուն հաջորդող երեսուն աշխատանքային օրվանից: Ամփոփաթերթն ստորագրվելուն հաջորդող աշխատանքային օրը դրա բնօրինակից արտատպված տարբերակը պատասխանատու ստորաբաժանումը հրապարակում է տեղեկագրում: Եթե միևնույն պայմանագրի շրջանակում ֆիզիկական անձի ներկայացրած դիրքորոշումն առնվազն երկու անգամ չի

հիմնավորվում, ապա գործընթացին մասնակցելու պահանջ ներկայացրած անձը զրկվում է տվյալ պայմանագրի շրջանակում արդյունքի ընդունման գործընթացին մասնակցելու հնարավորությունից, որի մասին հիմքերն առաջանալուն հաջորդող աշխատանքային օրը պատասխանատու ստորաբաժանումը տեղեկագրում հրապարակում է հայտարարություն: Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան, ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար:

Կարգի 111-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 109-րդ կետով նախատեսված գրավոր եզրակացության ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը: Ընդ որում՝

1) պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության՝ հաշվապահական ձևակերպման հիմքը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխանության մասին գրավոր եզրակացության հիման վրա պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից հաստատված արձանագրության առկայությունն է, իսկ մատակարարված ապրանքների պահեստ մուտքագրումը պահեստի պատասխանատուն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված արձանագրության պատճենի (ներառյալ գրավոր եզրակացության), իսկ ապրանքների գնման դեպքում նաև ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի, պատճենի հիման վրա, որը վերջինիս տրամադրվում է դրա կազմման օրը.

2) պատասխանատու ստորաբաժանումն արձանագրության, ներառյալ գրավոր եզրակացության, իսկ ապրանքների դեպքում նաև պահեստ մուտքագրման օրդերի պատճեններն այն կազմելու օրը գրավոր տրամադրում է պատվիրատուի ֆինանսական ծառայությանը:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց

նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի և «Արտակշին» ՍՊԸ-ի միջև 18.03.2021թ.-ին կնքված թիվ «ՉՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2021/1» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ թիվ 68-րդ չափաբաժնով ապրանքի անվանում նշվել է «Կարագ, զելանդական», իսկ տեխնիկական բնութագրում սահմանվել է հետևյալը. «Կովի կաթից սերուցքային կարագ, յուղայնությունը՝ առնվազն 82%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ, չափածրարված 5-25 կգ:

Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %: Մատակարարումը միայն ջերմակարգավորվող տրանսպորտային միջոցով:»:

Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից (ընդունող հանձնաժողով) 28.06.2021թ.-ին, 06.07.2021թ.-ին և 02.08.2021թ.-ին կազմված «ակտ արձանագրության» վերտառությամբ փաստաթղթերի համաձայն՝ «Արտակշին» ՍՊԸ-ի կողմից 28.06.2021թ.-ին, 06.07.2021թ.-ին և 02.08.2021թ.-ին Պատվիրատուին է մատակարարվել Պայմանագրի կետերին չհամապատասխանող ապրանք. Մասնավորապես՝ մատակարարվել է հայկական սերուցքային կարագ՝ կարագ զելանդականի փոխարեն:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 18.08.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 49 համարի ծանուցման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Արտակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 18.03.2021թ.-ին կնքված «ՉՀ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2021/1-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Մասնակցի կողմից մինչև 25.12.2021թ.-ը պետք է մատակարարվեր 358.55 (երեք հարյուր հիսունութ ամբողջ հիսունհինգ հարյուրերրորդական) կգ «Կարագ, զելանդական», որը չի մատակարարվել (սկսած սույն թվականի հունիսի 01-ից): Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ծիծեռնակ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը 2021 թվականի օգոստոսի 18-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքի մասով միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա, ուսումնասիրելով 28.06.2021թ.-ին, 06.07.2021թ.-ին և 02.08.2021թ.-ին կազմված Ակտերը՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պայմանագրի Մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի ոչ լիարժեք գործողությունների արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար: Ակտով նշվել է, որ մատակարարված ապրանքատեսակը չի համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրերին, մասնավորապես՝ մատակարարվել է հայկական սերուցքային կարագ՝ կարագ զելանդականի փոխարեն, այն դեպքում, երբ հստակեցված չէ,

թե Պայմանագրի տեխնիկական բնութագրի կոնկրետ որ չափորաշիչներին չեն համապատասխանում: Այլ կերպ ասած՝ Մասնակիցն ինչպիսի անհամապատասխանություններ պետք է վերացնի: Ընդ որում՝ կարագի «հայկական» լինելու փաստը, չի կարող գնահատվել տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչների անհամապատասխանություն (Կովի կաթից սերուցքային կարագ, յուղայնությունը՝ առնվազն 82%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ, չափածրարված 5-25 կգ և այլն):

Այս փաստի առկայության պարագայում միայն հնարավոր կլիներ փաստել Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետով սահմանված դրույթների կիրառման մասին, որն էլ, իր հերթին, կհանգեցներ ժամկետների խախտմանը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն արձանագրելով անհամապատասխանություն, նախ և առաջ պարտավոր էր կիրառել Կարգի 109-րդ կետով սահմանված դրույթները և նույն կարգի 111-րդ կետով սահմանված դրույթներին համապատասխան կազմել գրավոր եզրակացություն, այն է՝ պետական գնման պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ պետք է կազմվի եզրակացություն, որն էլ պետք է լինի ՀՀ ֆինանսների նախարարի 20.05.2017թ.-ի թիվ 228-Ն «պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևը հաստատելու և ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 180-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանով սահմանված պահանջների պահպանմամբ՝ ստորագրված գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից:

Սույն գործում առկա նյութերում բացակայում է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ կազմված բացասական եզրակացություն:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Կարգի 109-րդ կետով սահմանված դրույթները, մասնավորապես՝ Պատվիրատուն Պայմանագիրը լուծել է առանց իրավական հիմքի. Պայմանագրի լուծման օրը՝ 18.08.2021թ.-ին, Պատվիրատուն չի ունեցել պատշաճ կազմված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ գրավոր եզրակացության:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը

կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.08.2021թ.-ի թիվ 26/26-1/13782-2021 գրությամբ «Արտակշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/213 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**